

IV. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԳՐՈՒՄ

2013թ. ընթացքում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ աշխատանքներն իրականացվել են ՀՀ ՎՊԽ կողմից 2003թ.-ին ընդունված «Միասնական տեղեկատվական վիճակագրական համակարգի զարգացման հայեցակարգ»-ին համապատասխան:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների գործող տեղային ցանցը միավորել է տեխնիկական պահանջներին համապատասխանող 200 համակարգիչ:

Տեխնիկական աջակցություն ցուցաբերելու նպատակով, 2013թ.-ին այցելություններ են կատարվել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումներ, որտեղ մասնավորապես կատարվել են հետևյալ աշխատանքները. ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային գործակալություններում արդիականացվել են ծրագրային փաթեթները, թարմացվել են հակավիրուսային ծրագրերը, կարգավորվել են տեղային ցանցերը և մոդեմային կապը՝ համապատասխան գործակալությունների տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների հետ:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի Երևանի քաղաքային գործակալությունում արդիականացվել է համակարգչային ցանցը, համացանցին միացած գործող բոլոր համակարգիչներին հասանելի է դարձել համացանցին:

Մշտապես կատարվել է ՀՀ ԱՎԾ ներքին «Intranet» կայքի սպասարկում և արդիականացում, ինչպես նաև շաբաթական պարբերականությամբ՝ www.armstat.am պաշտոնական կայքէջի արխիվացում:

«Արմենիահինֆո» ծրագրի շրջանակում շարունակվել է ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մի շարք կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում նոր համակարգիչներով և անհրաժեշտ տեխնիկական միջոցներով համալրումը, կատարվել են դրանց տեղակայման և ծրագրերով համալրման աշխատանքներ:

Շարունակվել է վիճակագրական և վարչական տվյալների արխիվացումը: Համակարգչային սարքավորումների անխափան աշխատանքն ապահովելու նպատակով կատարվել են ստուգումներ, ախտորոշումներ և սարքավորումների վերանորոգում:

2013թ.-ի ընթացքում ՀՀ ԱՎԾ-ում շահագործվել են թվով 76 տվյալների բազաներ, ինչպես նաև 50 տարբեր ոլորտների ծրագրատեխնոլոգիական համալիրներում կատարվել են 80 փոփոխություններ:

Իրականացվել են www.armdevinfo.am կայքի վարման և արդիականացման աշխատանքներ, «ԱրմԴեվԻնֆո» բազան համալրվել է Հազարամյակի զարգացման նպատակների (ՀԶՆ) ցուցանիշների 2012թ. տվյալներով և տեղակայվել նոր տեղեկատվական բազաներ՝ «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2013» և «Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն, 2010» վիճակագրական հրապարակումների հիման վրա:

Շարունակվել են «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը ԹՎԻՆԻՆԳ ծրագրի միջոցով» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակում 2012թ. սեպտեմբերի 14-ից www.armstatbank.am կայքէջով հանրությանը հասանելի դարձած ArmStatBank տվյալների բազայի աղյուսակների ստեղծման և տեղադրման աշխատանքները՝ PX-Web ծրագրով, PC Axis ձևաչափով, ինչպես նաև վիճակագրական տեղեկատվություն սպառողի համար մատչելի MS Excel, xml կամ այլ ձևաչափերով: Այն

հնարավորություն է ընձեռել ներքեռնել տվյալները աղյուսակային, գծապատկերային, հետագայում նաև՝ քարտեզային պատկերավորմամբ: Մինչև 2013թ. տարեվերջ կայքէջը համալրվել է ևս 52 վիճակագրական աղյուսակներով (բազաներով):